դաւորէ երաշխաւոր անձին իւրոյ ըստ օրինօք, զի մեղաւորն պատրաստ լինիցի 'ի ատենի դատաւորաց 'ի ժամանակի քրէական մեղաց դատողութեան և թողցէ նմայ, և գանգատօղն պատրաստեսցի գանգատն իւր Օրինաւոր սահմանաւ և պատրաստեսցի վկայքն իւր, զի հատատեսցի գանգատն իւր առաջի ատենի դատաւորաց, այլ եթէ մեղաւորն ոչ տացի երաշխաւոր անձի իւրոյ, մատցէ 'ի բանտ ծախիւքն գանգատօղին մինչև Օրն ելանելոյ վճիռ դատաստանի 'ի վերայ գանգատին իւրոյ։

ԳԼՈՒԽ ՃԴ.

Քրէական մեղաւորն ոչ ոք տեղի մի դատեսցի, բայց 'ի քաղաքի որում գտցի իշխան և դատաւոր խորհրդակցօք և ատենաբան դպրիւք։

ԳԼՈՒԽ ՃԵ.

Հնդետասան աւուր յառաջ քան զդատողութեան քրէական մեղաւորի, եթէ մեղաւորն իցէ սպանանող հարցցի 'ի նմանէ ով ոք 'ի ազգէ իւրմէ ցանկայ զի դատեսցի զինքն, և մեղաւորն ունի արձակութիւն ընտրել երկոտասան այր 'ի ազգէ իւրմէ, կամ որ ոք այլ ազգէ, բայց 'ի մերձաւոր ազգականէ, և 'ի դռանէ դատաստանի ելցէ կոչումն 'ի նոյն երկոտասան անձանց, զի